

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՄԻԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵԼԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԽԻՎ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мелі».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԵՓՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առն օրերէն):
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ:
ՏԷԼԵՓՈՆ № 253.

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Աղետի բեմը. Գարեգին Կերեկեան
Թիւրքիւն ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Հին Նախնական. Նամակ Գանձակից. Ներ-
քին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պա-
տերազմի շուրջը. — ՀԵՐԱՅԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆ-ՆԵՐ.

Ա. Ղ. Տ. Բ. Մ. Ը.

«Մշակի» ներկայ համարում մենք գե-
տեղում ենք Նախնական շրջակայքի
քարտէզը, որ անշուշտ կը նպաստէ ըն-
թերցողին փոքր ի շատէ պարզ գաղա-
փար կազմելու այն շրջանի մասին, ուր
տեղի ունեցան աղետալի դէպքերը:

Նախնական քաղաքից դէպի հիւսիս
գտնվում են այն գիւղերը, որտեղ կա-
տարվեցին առաջին սպանութիւնները:

Սալիկու գիւղում սպանվեց Սաչա-
տուր Բաբանանցը իր ընտանիքի մի քա-
նի անդամների հետ միասին:

Շխմահմուդ հայ գիւղը այն կենտ-
րոնական կէտն էր, որտեղ պատուարան
գտան շրջակայ հայ գիւղերից փախած
հասարակութիւնները: Այդ գիւղի մօտ
սպանվեցին հայերի ձեռքով երկու շահ-
րեցի թուրքեր, որոնք խրոխտանում էին
հայերի վրա և հայոյում:

Չահուկ կամ թուրքերէն Զահրի
գիւղը մեծ գիւղ է, մօտ 800 տուն, որի
բնակիչների 2/3 թուրքեր են, իսկ մի եր-
րորդը հայեր: Շխմահմուդի դէպքից յե-
տոյ շահրեցի թուրքերը յարձակվեցին
հայերի վրա, կոտորեցին շատերին և թա-
լանեցին տները:

Չահուկի մօտ է գտնվում Սալիկու գիւ-
ղը, որի բնակիչներին թուրքերը բռնի
ընդունել են տալիս մահադատութիւն:

Չահուկից դէպի հիւսիս-արեւելք գտն-
վում են Զարաբաշի գիւղական հասա-
րակութեան գիւղերը՝ Արինջ, Նորս և
միւսներ, որոնք ենթարկվեցին ասպատա-
կութեան տեղական թուրքերի կողմից
իրանց տանուտէրի առաջնորդութեամբ:
Հայերը թփեցին եղան Գեօօր գիւղում,
որտեղ նրանց այցելեցին Զանգեզուրի
գաւառապետ Ալալխանին և Տաթևի յա-
ջորդ Ներսէս վարդապետը ու միմիջարե-
ցին, տալով առաջին պաշտպանութիւնը,
իսկ յետոյ ուղարկելով նրանց համար
Զանգեզուրի գաւառից հայ:


Գաւառի այդ մասը մօտենում է Զան-
գեզուրի գաւառին: Վերջին գիւղն է մօ-
լօկաների Բիշանա գ կամ Կարմալինով-
կա գիւղը, որ ծառայում է Նախնա-
կանի վարչական հիմնարկութիւնների հա-
մար իւրեւ ամրանոց:

Չահուկից դէպի հիւսիս Դարալագեա-
զի լեռներում գտնվում են Սէս, Մար-
տիրոս գիւղերը, որոնց շրջակայքում
դեռ մինչև այժմ շարունակվում են յուզ-
մունքները: Սակայն այստեղ հայ գիւղերը
կարողացել են բաւականաչափ իրանց
պաշտպանել:

Նախնականից դէպի հարաւ-արեւելք
գտնվում է Թաթև գիւղը, որ ենթարկ-
վեց թուրքերի ասպատակութեան, հրդե-
հի և կոտորածի:

Թաթևի մօտ գտնվող երկու թուրք
գիւղերը՝ Դոշադիկա և Շաքարաբաշի վատ
գեր կատարեցին վերջին դէպքերում, ա-
ջակցելով Նախնականի թուրքերին շար-
դեղու և կողոպտելու հայերին: Այդ գիւ-
ղերի բնակիչներն էին մեծ մասամբ և
այն վաթսուներեք ասորիների կողոպտող-
ները, որոնց մասին գրված էր մեր լրա-
գրում: Ներգործական գեր կատարեցին
և Ներսիս բաղամարդ թուրք գիւղի բը-
նակիչները, գործելով յարձակումներ հա-
յերի վրա:

Ն. Ա. Խ. Զ. Ե. Ի. Ա. Ղ. Տ. Բ. Մ. Ը.



Ներսիսի մօտ է գտնվում հայ մեծ
Դզնուկ գիւղը, որի բնակիչներից մի
բանիւրը դաշտում սպանվեցին թուրքերի
կողմից հաշտութեան երդումից յետոյ:

Բոլորովին հարաւում գտնվում են Նամ-
խանա, Աստապատ գիւղերը և Կարմիր
վանքը, որոնց մասին յիշված էր հեռա-
գիրներում:

Նախնականից դէպի արեւելք գտնվում է
Երեւան կամ Արինջ գետի հովիտը, որ-
տեղ փտանվեցին մի շարք գիւղեր: Ե-
րեւանի վանքից, որ գտնվում է Ալալ-
կանիս գիւղին կից, թուրքերը տարան
Հազարափրկչի նշանաւոր սրբութիւնը,
որ յետոյ քաջ հայ կարիներին ձեռքով
յետ խլեց: Այդտեղ է և Գեազ գիւղը,
որ ենթարկվեց ասպատակութեան:

Մենք չենք յիշատակում Նախնականի
շրջակայքի ուրիշ կէտերը, որովհետեւ մեր
նպատակը աշխարհագրական տեղեկու-
թիւններ հաղորդելը չէ, այլ մի որոշ
գաղափար տալ աղետի բեմի մասին: Իսկ
ընթերցողը ինքը կարող է քարտէզից
ստանալ և այն աշխարհագրական միւս
տեղեկութիւնները, որով ինքը հետա-
քըքրվում է:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախնականի գաւառից ստացած մեր
նորագոյն տեղեկութիւնները ցոյց են տա-
լիս, որ այնտեղ գաղացվում է հացի մեծ
կարօտութիւն: Բազմաթիւ հայ ժողո-
վուրդը, որ գնազան գիւղերից խմբված
է Շխմահմուդ գիւղում, չէ կարողանում
ճարել իր ապրուստի համար բաւականա-
չափ ալիւր: Շատերը ստիպված են կա-
նաչեղէնով բաւականանալ: Ալիւրի պու-
ղը արժէ 4 ռուբլի, եթէ կանխիկ վճար-
վի արժէքը:

Մենք գիտեցինք այդ կարօտութեան
մասին Վեհափառ Կաթողիկոսի հաստա-
տած մասնաժողովին և նա իր կողմից
կարգադրեց, որ Երեւանում գնվի ալիւր
և անյապաղ ուղարկվի Նախնական տե-
ղական յաջորդին բաժանելու կարօտեալ-
ներին:

Մուշէ վարդապետը հեռագրով յայտ-
նեց մեզ, որ Նոր-Նախնականից «Մշակի»
խմբագրութեան անունով փոխադրված է
2000 ռուբլի յիշված մասնաժողովին
յանձնելու համար: Այդ գումարը երէկ
ստացանք Ագով-Դոնեան բանկի միջոցով
և յանձնեցինք մասնաժողովին:

Կարապետ վարդապետը ուղարկել է

Դարեգին եպ. Սաթուհեանին մայիսի
23-ից հետեւալ հեռագիրը:

Երէկ տեղեկութիւն ստացանք, թէ
թուրքերը, որոնք խոստացել էին շէյխ-
ուլ-իսլամի պատուիրակ Շարուրի դա-
գին խաղաղութիւն պահպանել, ստա-
նալով նոր օժանդակութիւն գաւառից,
յարձակվեցին Զաքանչի գիւղի վրա և ա-
սպատակեցին: Ժողովուրդը պատուարվեց
եկեղեցում: Գաւառապետը ուղարկեց
այնտեղ կօզակներ:

Գենեբալ Ալիխանով-Ավարակի կանչե-
լով Նախնական քաղաքի պատուաւոր մահ-
մեդականներին, ամաչեցրեց կատարած
անկարգութիւնների և եղելի թալանի
համար, յորդորելով վերադարձնել կո-
ղոպտած ապրանքը, որը այժմ գաղտնի
ժողովում է մի տեղ՝ տէրերին վերա-
դարձնելու նպատակով:

Շարաջ գիւղի դաշտում, որտեղ ազ-
գաբնակութիւնը վերադարձել էր գենե-
բալ Ալիխանովի յորդորանքով, տեղի ու-
նեցաւ մի դժբաղդ դէպք՝ մի հայ սպան-
վեց:

Այն գիւղերում, որտեղից փախել են
հայերը, տները դատարկված են, մա-
սամբ այրված, առանց դռների և լուսա-
մուտքների:

Նախնականի յաջորդ թումա վարդապե-
տը հեռագրում է մեզ, թէ այնտեղ է
հասել էջմիրանից Մեսրոպ վարդապետը:
Հայերը երբեք նախապաճակ չեն եղել և
առհասարակ յարձակումներ չեն գործել,
այլ ծայրայեղ դէպքում միայն ինքնա-
պաշտպանութեան են դիմել. ուստի սխալ
են այն լուրերը, որոնք տարածվում են
հայ երիտասարդներից կազմված ստուար,
բաղամարդ խմբերի մասին:

Երևանից, մայիսի 23-ից, 4 ժ. 34 րօպէին
կէսօրից յետոյ ստացանք հետեւալ հեռագիրը:

«Չը Նայելով այն բանին, որ հայերը
բոլոր ժամանակը շատ կորեկտ էին
պահում իրանց և ամեն կերպ խուսա-
փում էին ընդհարում ունենալուց թուր-
քերի հետ, այսօր, ցերեկվայ 2 ժամին,
թուրքերը բազարի գնազան մասերում
սկսեցին հրացանաձգութիւն հայերի վրա,
որի ժամանակ քանից աւելի հայեր
սպանվեցին. թուրքերը վիրաւորվեցին
երկուսը: Թուրքերը կողոպտեցին նոյն-
պէս հայերի մի քանի խանութներ:
Տրամադրութիւնը երկուդարի է:

Պ. Կանդուրալով

Երևանից, մայիսի 23-ից, 4 ժամ 37 րօ-
պէին ստացանք հետեւալ հեռագիրը:

«Այսօր, երկու ժամին, սկսվեց զինված
ընդհարում հայերի և թուրքերի միջև:
Երկու կողմից և վիրաւորված և սպան-
ված են տասը հոգուց աւելի: Այժմ
հանգիստ է: Մարտափը մեծ է:

Լեւոն վարդապետ

Երևանից, մայիսի 24-ին հեռագրում են հե-
տեւալ:

Երեկ թուրքերը սկսեցին անկարգու-
թիւններ, հայ սպանված է 7, վիրաւոր-
ված 17, թուրքերից վիրաւորված են
2 հոգի: Այսօր մաղաղաններ փակված են:

Երևան, մայիսի 24-ին, 2 ժ. 25 րօպէին
կէսօրից յետոյ:

«Երէկ սպանվեցին 12 հայեր և վիրա-
ւորվեցին ութ հոգի: Թուրքերն ունեն մի
քանի սպանվածներ և վիրաւորներ:

Լեւոն վարդապետ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵԼԱՆԻ ԵՒ ՆՐԱ ԳԱՆԱՌԻ ԱՂԵՏԸ
(Նամակ Հին-Նախիջևանից)

17 մայիսի

Մի ամիս առաջ Նախիջևանի շրջակայ թուրք գիւղերում Պարսկաստանից եկող թուրք-մշակ-ները (օթալի) խօսում էին, թէ Նախիջևանում յուզմունք է լինելու, թէ քաղաքի թուրք բեկերը նախագիտուած են այդ մասին թէ Պարսկաս-տանի թուրք ու բրդերին և թէ տեղիս թրքա-կան գիւղերին, որ երբ և իցն դրանք նկատեն Նախիջևանում սե ծուխի մի սիւն, փութան օգնութեան հասնել իրանց։ Դրանից մի քանի օր յետոյ, գիշերով անյայտ Այլարատ գիւղի ճանապարհին սպանվում է մի թուրք մշակ։ Այս սպանութիւնը թուրքերը վերագրելով հա-յերին, հետեւեալ օրը ցերեկով քաղաքային այ-գու մօտին, սպանում են անմեղ մի հայի։ Մի օրից յետոյ վերաւորում են Հաջիվարի ճանապարհին դարձեալ երկու հայի և Սալիլու գիւղում բրդում են հարուստ Սաջատուր Բաբասեանին, նրա կնոջը և մօրը ու ծանր վիրաւորում նրա աղջկան։ Իսկ տունը կողոպտում են։ Այդ դեռ բաւական չէ։ Ջահուկ տանող ճանապարհի վրա, Շիխ-մահմուտ գիւղի սահմաններում վիրաւորվում է մի ջահեկցի թուրք։ Ջահեկցիները մի քանի հարիւր հոգով գալիս են քաղաք վերադար-ձին խլում են նախարարանից Շիխմահմուտի նախիրը և այնպէս գնում իրանց գիւղը։

Գրգռված դուռնիները իր ծայրայեղութեանն է հասնում, և ամսիս 10-ին Նախիջևան է աճա-պարում քաղաքագլուխ Ջաֆար-կուլի խանի հետ երևանի փոխ-նահանգապետը և իշխանում է թրքական թաղում գտնվող Ռահիմ խանի տանը, ուր և 11-ին ժողովի է հրաւիրում քա-ղաքիս աչքի ընկնող անձնատուրքիւններին, որոնց և համոզում է ու երաշխաւորում իր գլխով բաց անել իրանց խանութները (Հայե-րը երեք-չորս օր շարունակ խանութ չէին բաց անում)։ Այնպէս երաշխաւորել են և Ջա-ֆար-կուլի ու Ռահիմ խաները, հայերը հետե-ւեալ օրը, ամսիս 12-ին, բաց են անում ի-րանց խանութները։ Ժամի 8-ից թուրք խու-ժանը, որ ահագին բազմութեամբ դիրք էր բռնել իրանց մէջիտի դրան ու տանիքին, սկսում է հրացաններ արձակել հայոց ս. Գէորգ եկեղեցու բազում հայերի վրա և շուկայում եղողներին կողմը։

Այդ իսկ օրակին շուկային կից թրքական թաղերում վաղօրօք ծածկված հազարաւոր բազմութիւնը՝ կէսը գիւղերից, կէսը՝ քաղա-քից, յարձակվում է հայ խանութների վրա, և թալանը սկսվում է սոսկալի սպանութիւն-ներով ու հրդեհներով։ «Սե ծուխի» սիւնը, բարձրանալով դէպի երկինք, կատարում է չարազուշակ աղղանշանի դերը։ Ով բացել էր իր խանութը, սպանվում է խանութի դրանը։ Մի քանիսը, որոնց թոււում և քա-ղաքիս առաջնակարգ վաճառական Կ. Աղամանը, իր փեսայի և պրիկաշիկի հետ, այրվում է իր խանութում։ Այդ վիճակին են ենթարկվում և եղբ. Սալաթիանները, որոնց ամխացած դիակներն են այժմ գտնվել։ Թա-լանի մասին պարզ գաղափար կազմելու հա-մար, հարկ է ասել, որ նոյն իսկ ամենավեր-ջին «փինաչի» խանութն էլ կողոպտված է։ Սպանվածների թիւը առայժմ պարզ որոշել անկարելի է։ Մինչև օրս գտնված են 50-ին մօտիկ հայի գիականը։ Միայն 100-ից աւելի է դժբաղ թիւը։ Որպէս զի թուրք խուժանը ձեռք չը տայ իրայինների խանութներին, այնպի-սիների դռներին կայցրած է եղել յայտարա-րութիւն հետեւեալ գրութեամբ՝ «Միմիլայ, Ռահիմ, Ռահման» և այլն։ Այն կասսաները, ո-րոնք 26 պուլից պակաս են եղել, տարվել են ամբողջութեամբ, իսկ աւելիները (14—16 հատ) ջարդված են։ Այդպիսիներից մէկը տեսայ եղբ. Պողոսեանների բակում։

Կասսաներում եղած մուրհակները և ուրիշ հարկաւոր թղթերը յափշտակված են։ Աղէտից առաջ թուրքերը մի քանի օր շարունակ վերց-նելիս են եղել հայերից անխօս գնաւազան աղ-բանքներ և խարժութեամբ առել են Կ. Աղա-մանից այն պայմանաթուղթը, որով Իմայիլ խանը պարտաւորվել է պատասխանատու լի-նել շուկայի ամբողջութեանը։

Այդպէս քաղաքի մասին։ Այժմ դառնանք դէպի գիւղերի աղէտը։

Ամսիս 12-ին մեր քաղաքի շրջիտը, Ջէհադին թրքաբնակ գիւղը հարսանիք գնա-լու պատրուակով, շրջից բոլոր թրքական գիւ-ղերը և, ինչպէս պատմում էին, բոլորին նկա-րագրեց քաղաքի «բունտի» մասին և տուեց

հայ գիւղերի թալանի ծրագիրը։ Սկզբում քա-ղաքի վիճակին ենթարկվեց Թաղա-գիւղը, որի բնակիչները փախան Շիխմահմուտ հայաբնակ գիւղը։ Դրանց տները կողոպտվեցին, իսկ մի քանիսը այրվեցին։ Մեր Կուլիբեկեղեզ գիւղն էլ ենթարկվեց թրքական տակաւնի բարբա-րոտութեանը։ Ջէհադին գիւղի աղղեցիկ Գեալ-բալայ Բաբային հաճելի էր եղել մեզ հարսա-նիք հրաւիրել և նաղարայ-գունայով մորթո-տել։ սակայն մի աներևոյթ մատ փրկեց մեզ, և մենք ու մեր գիւղացիները չը գնացինք այդ հարսանիքը։ Բայց և այնպէս զգալով, որ վտանգը չէ անցած, ես, բոլոր մեր գիւղի հա-սարակութիւնը՝ կլին և երկաթ իրանց աղ-բանքներով գետեղեցի թէ դպրոցիս տանիքին և թէ սենեակներում։ Այն գիւղացիները, որոնք զէնք ունէին, պահապան դրվեցին մի քանի տեղերում գիւղի ծայրերին։ Իսկ մնացածը նոյն-պէս մտաւ դպրոցի շինութեան մէջ։ Ես ուսու-ընկերիս և երկու գիւղացիներին հետ բարձրա-ցանք դպրոցի կտուրը և մտանք մեր դիրքերը։ Գիշերվալ ժամի 8-ից մեզ շրջապատեց Ջէ-հադին, Լասար և Բիւլուս թրքական գիւղերի խուժանը, բաղկացած 400—500 մարդոց, և սկսվեց կատաղի հրացանաձգութիւնը։ Շնորհիւ մեր բռնած դիրքերի մենք մինչև առաւօտեան ժամի 4-ը դիմադրեցինք այդ ամբողջին և արգելեցինք գիւղ մտնել։ Միայն ծայ-րերի տներից մէկից նրանց աղողվեց դո-ղանալ մի գոմէշ և մի կով։ Այդ ամբողջի կա-տաղութիւնը այնքան սոսկալի էր, որ նա ձգտում էր խմբովին վրա տալ և ձմել մեզ՝ այդ պատճառով ամեն անգամ «ես Ալի» էին գոռում և յարձակում գործում։ սակայն ան-օգուտ։

Հրդեհված, կողոպտված է Ջահուկ գիւղը, որի բնակիչները մի մասը (40—50 մարդ) սպանված է, մի քանի կանայք գերի են մնա-ցել թուրքերի մօտ, իսկ մնացածները ապաս-տանել են Շիխմահմուտ գիւղը։ Ջահեկցիները մտադիր են գաղթելու։ Ջահիկ վիճակին են ենթարկված Նաղարապատ, Ուզուն-օբա, Սա-լիլու, Սալաթա, Ալագեղ-մաղրա, Մամարգա-գիւղ, Գիւլթափա, Գեալիմեկ-դիւղ, Կուլի-բեկ-գիւղ, Եարիմլա, Հալիվար, Լարախան-բեկլու գիւղերը, որոնք ամայի և անմարդա-բնակ են մնացել և որոնց միջից լսվում է միայն արագիւնների ծուղրուղուն և շների հա-շոցը, որոնք ասես մի առանձին դառնութեամբ ասում են թէ՝ «հիւն աշխարհը այդքան ան-գութ է»։ Բացի Թմբուլի և Լարախանբեկլուի բնակիչներից, մնացած գիւղերի բնակիչները փախել ու լցվել են Շիխմահմուտ գիւղը։ Հա-րիմլա գիւղի եկեղեցին կողոպտված է, որ-տեղից յափշտակել են Երնջակու վանքի Նա-զարափրկիչը և մասունքները։ Մինչև օրս գտնված է ալի միայն հինգ մատր։ Թմբուլ գիւղում սպանված 30—40 մարդ։ Մը-նացած գիւղերի մասին առ այժմ ստույգ տեղեկութիւններ չը կան, միայն լսվում է, որ նրանք էլ մեր վիճակին են մատնված։

Այդքան գիւղերի անտուն-անտէր, սովա-լուկ փախստականները լցվել են Շիխմահմուտ գիւղը և տանջվում են սովի ճանկերում ու մի զլուխ դնելու տեղ չունեն։ Գիւղերի կրած նիւ-բնակի կորուստ աննկարագրելի է և դեռ չէ որոշված։ Բացի այն գիւղ չը կայ, որ 10—15 զոհեր տուած չը լինի։ Միայն քաղաքի միասը 2—3 միլիոնի է հասնում։ Եթէ չը լինէր Կա-րապետ և Թովմաս վարդապետները կռնադուն գործունէութիւնը, գաղթականութեան հո-սանքը այժմ սկսված էր։ Անհրաժեշտ է ան-յապաղ նիւթական օգնութիւնը։

Լեւոն Սանատմեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մայիսի 22-ին

Այժմ մեր քաղաքի բոլոր լուրջ, խելացի ու հեռատես անձինք, հայ ու թուրք ազգու-թեան պատկանող, իրանց բոլոր ունի ու միտքը կենտրոնացրել են մի բանի վրա, որը բոլոր կենսական հարցերից ու հոգսերից աւնեակեցաւ և թէ քաղաքի և թէ նրա լայնածաւալ նահանգի ազգաբնակչութեան հա-մար, այդ բանն է հայերի ու թուրքերի մշտա-տես համերաշխութեան հարցը, անկեղծ բարե-կամութեան ու փոխադարձ բարեացակամու-թեան հարցը։ Ամեն կերպ շնտուած, աշխա-տում են միջոցներ ու հնարներ գտնել ցա-ւալի դէպքերի առաջն առնելու համար, դէպ-օքերի, որոնք բարեբախտաբար ոչ մի տեղ, թէ Գանձակում և թէ նրա նահանգում, տեղի չեն ունեցել մինչև օրս, չը նայած Գանձակի մշտական շփման Բագուի հետ, այն վայրի, որը վայրագ եղբայրապատկան նախա-ձեռնողը եղաւ Կովկասում։

Ամսիս 19-ին տեղական հայ հասարակու-թեան կողմից բազմաթիւ ներկայացուցիչներ այցելեցին Շահ-Աբբասի մեծ մզկիթը, որտեղ խուռն թուրք ու հայ բազմութեան առաջ մի խելացի քարոզ խօսեց երկու ազգերի սերտ համերաշխութեան մասին Ախունդ Մօլլա-Մահմեդ Պեշնամադ-գաղէն, որը յաճախի, համարեա ամեն օր խօսում է այդ նիւթի մասին տեղական մզկիթներում։ Ախունդ Մահմեդը անկեղծ անձնաւորութիւն է, հա-մակելի, լուսամիտ աշխարհայացքի տէր, նրա խօսքն ազգու է. նա մշտապէս շփվում է հայ հոգեւորականութեան ու հասարակու-թեան ներկայացուցիչների հետ։ Դալի Մօլլա-Ասկեր Պօլադ-գաղէն էլ գործում է նոյն հո-գով. թուրք հոգեւորականութիւնը հետևում է իր դեկավարներին։ Ախունդի առաջարկու-թեամբ ընտրվել է մի խառն յանձնաժողով հայերից ու թուրքերից կազմված, ինտելի-գենտ անձինքներից մեծ մասամբ, որը պէտք է աշխուրջ հսկէ թուրք ու հայ ազգաբնա-կութեան յարաբերութիւնները վրա, շրջէ երեքնալի քաղաքամասերը, զրուցէ ամբոխի հետ, շփվի ժողովրդի բոլոր խաւերի հետ ու հայի և թուրքի մէջ տեղի ունեցած ամենա-անհշան ընդհարման դէպքում անգամ իսկոյն և եթ միջամտէ, միջոցներ ձեռք առնէ ընդ-հարման հետեւանքների զարգացման առաջն առնելու ու ընդհարմողներին հաշտեցնելու համար։ Յանձնաժողովը կարող է ու պարտա-ւոր է նոյն իսկ երկու ազգութեան ամբոխի ձեռնհաս, լուրջ, խելացի ու իրանց շրջմա-նեցում աղղեցիկ մարդկանցից ընտրել ենթա-յանձնաժողովներ կամ խմբիք նոյն հոգով ու ծրագրով գործելու համար։ Նահանգապետը, որի հետ տեսնվել են յանձնաժողովի անդա-մները, համակրութեամբ է վերաբերվել նրանց ծրագրին ու ցանկութիւններին, խոստանալով իր կողմից անպայման անաչառ, անկեղծ բարեցակամ վերաբերում թէ հայերին և թէ թուրքերին, մի բան, որը շատ ցան-կալ է ներկայ լուրջ պայմաններում ու որի իրական, աներկայի փաստօրէն գոյու-թիւնը կարող է մեծապէս նպաստել Գան-ձակում ու նրա նահանգում գոյութիւն ունեցող խաղաղութեան ամրապնդվելուն ու յարաւերակութեան Յանձնաժողովը որոշել է բոլոր օրինաւոր միջոցներով կուռելու այն մութ ոյժերի դէմ (յաճախակի ոչ տեղական ազգերի պատկանող), որոնք, մոռացած խղճ, արդարութիւն ու ազնուութիւն, սուտ, շինծու լուրերի ու անստորագրել նամակների կամ կո-չների միջոցով աշխատում են զրգուել իրար դէմ հայերին ու թուրքերին, աւելի վերջին-ներին առաջինների դէմ... Մօտիկ անցեալում այդպիսի զաղբիլ գործունէութեամբ հռչակ-վեց մեղանում մի համալսարանաւարտ ոչ-տե-ղացի «հետեղեցի» (խելճ դիւլում, ինչքան արատաւորված ես դու), որը բարեբախտա-բար հեռացաւ այստեղից։

Շատ ցանկալի է, որ Գանձակում կազմված յանձնաժողովի պէս խառն յանձնաժողովներ, հայերից ու թուրքերից, կազմվելն մեր գիւ-ղական համայնքներում ու շրջաններում՝ գոր-ծելու համար նոյն հոգով, ծրագրով ու ուղ-ղութեամբ։ Գիւղական քահանաները, մօլլանե-րը, ուսուցիչները, տանուտէրները, գիւղական գործիչները, գիւղերում այժմ գտնվող ին-տելիգենտները ու նրանք, որոնք շուտով տե-ղափոխվելու են այնտեղ՝ ամառն անցկացնե-լու համար, պէտք է աշխատեն օր առաջ ձեռնա-մուխ լինել գործին, երկու զբաղի ազգերի համերաշխութեան պահպանման ու ամրապնդ-ման, մի բանի, որից կախված է լայնածաւալ գիւղաշատ նահանգի խաղաղութիւնն ու ան-դորրութիւնը, գիւղական ժողովրդի չարքաշ աշխատանքի արդիւնաւետութիւնը, քանի որ սկսվում է ամառը, յն ժամանակը, երբ գիւ-ղացին պէտք է ք-ղէ իր ամբողջ տարվայ աշխատանքի պտուղը, երբ նրա կենքը պէտք է անցի մեծ մասաւ դաշտերում, սա-րբերում ու ձորերում, ե. ը նրա նախիրը գի-շեր-ցերեկ պէտք է լինի չըրսում։ Կենքի ու գոյքի ազահովութեան համար պէտք է ամեն տեսակի ջանքեր գործ դնել գիւղում։

Ամառը սովորաբար յաճախակի են լինում ընդհարմները, որոնք երեքնալի վերջանում են սպանութիւններով, ծնում են արեւնահողու-թիւն։ Սովորական տարիներում այդպիսի դէպքերը կրել են միշտ մասնաւոր բնաւորու-թիւն, ու առուժել են նրանցից միմիայն ան-միջապէս ընդհարմողները։ Բանի որ այժմ նոյնանման դէպքերը կարող են ընդհանրական բնաւորութիւն, ազգայնական գոյն ստանալ ու աղէտների պատճառ դառնալ, գիւղական խառն յանձնաժողովներ պէտք է իրանց ուն-

ու միտքը կենտրոնացնեն գլխաւորապէս խոտ-հարբները ու արօտավայրերի պատճառով ծա-գող վէճերի վրա, տասն աչքով մտիկ տան նրանց, ըննեն այդ վէճերը, տեղն ու տեղը բաւարարութիւն տան վիճողներին, հաշտեց-նեն նրանց ու այդպիսով կորստաբեր ընդհա-րուեցների առաջն առնեն։

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 23-ին Պարսից Շահը ժամանել է ռուսական Աստարա, ուղեկցված իր շքախմբով։ Ռուսական Աստարան զարդարված էր ռուսական և պարսկական դրօշակներով։ Ռու-սական Աստարայում Նորին Մեծութեանը դի-մաւորեցին այդ նպատակով ուղարկված պաշ-տօնեաները, Ռուսաստանի և Թուրքիայի պարսկական դեսպանները և տեղական իշխա-նութիւնները։ Ամսի 23-ին և եթ Շահը մեկնել է Հաջիկաբուլ, ուր կը հասնի 26-ի երեկո-յան։ Գիշերն անցկացնելով կայսերական գը-նացքի վագօնում, 27-ի առաւօտեան նա ճա-նապարհ կընկնի Բալաբարիով դէպի Վօյօ-չիսկ առանց Բագու մտնելու։ Կովկասի Փո-խարքայի կարգադրութեամբ Շահի արտակարգ գնացքի առկից, բաւական տարածութիւն ա-ռաջ ընկած, կը մեկնի նախ մի շոգեկառք և ապա միայն կը հետեւ գնացքը։ Այդ կարգը կը պահպանվի Հաջիկաբուլից մինչև Բասուլ քաղաքը։—Երեկ երեկոյան Թիֆլիսից Հաջի-կաբուլ մեկնեցին Անդրկովկասի երկաթուղի-ների գլխաւոր Ի. Կ. Իվանովսկին, երկաթու-ղային ժանդարմների գլխաւոր պոլիօնիկ Պ. Ն. Սօլովիօնը և ուրիշները։

Թիֆլիսի քաղաքագլուխը ստացել է հրաւէր մասնակցելու քաղաքագլուխների համառու-սական ժողովին, որ պէտք է տեղի ունենայ Մօսկվայում և քաղաքագլուխ վերմիշեան ճանապարհ է ընկնում Մօսկվա, մասնակցե-լու ժողովի պարագմունքներին։

Նախիջևանի աղետի զոհերի օգտին ստա-ցանք 1) Ա. Թառայանից մի խումբ վաճա-ռականներից հաւաքած 64 ռ., նուիրատուներն են. Ա. Թառայան, Ա. Սուրանեան, Վ. Կատարեան 10-ական ռուբլի։ Մ. և Յ. Կի-րակոսեանց 5 ռուբլի, Ն. Յ. Յովան, Յօկ-նայան, Մ. Մովսեսեան, Վ. Թարսեան, Ա. Սուրանեան, Ս. Մօսեսեանց 3-ական ռ.։ Մի ոմն, Պ. Հ., Մ. Յակոբեան, Գ. Լուկիշա-նեան, Ա. Թաթուլեան, Ա. Նահապետեան, Օ. Առաքելեան, Ս. Իօվաթեան, Յ. Ավա-զով 1-ական ռուբլի։ Ա. Արմատեանց 2 ռ.։ Պ. Ա. Թառայանի ձեռքով հայ վաճառական-ներից հաւաքած։ 2) Ջ. Ջուռաւուգեանից 1 ռ.։ Հնդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 251 ռ. 10 կ.։

Այս տարվայ մայիսի 1-ին Բարձրագոյն բարեհաճութիւն է եղել հրամայելու, որ վե-րացի 1903 թվի դեկտեմբերի 23-ի օրէնքը, որով իրաւունք էր տրվում Կովկասի կառա-վարչապետին Ռուսաստանի ներքին նահանգ-ներն աքսոր ուղարկել հայ-լուսաւորչական այն քահանաներին, որոնք կառավարութեան կարգադրութիւններին հակառակ յանցանքներ են գործել կամ որոնք միասակար են պետա-կան կարգերին, նոյնպէս և այդ օրէնքի գոր-ծադրութեան նախկին բոլոր դիպուածները։ Այդ առիթով ներքին գործերի մինիստր հօֆ-մայստէր Բուլիգինը հաղորդել է Կովկասի փոխարքային, որպէս զի նա անէ հարկաւոր կարգադրութիւնները։

Բագուի լրագրներում տղված է ժամանա-կաւոր գնեւոր-նահանգապետ Ամիրխորի մի յայտարարութիւնը կամ կոչը, ուղղված Բագուի ազգաբնակչութեան՝ հանգստացնելու համար։ Այդ գրութեան մէջ գնեւոր-նահան-գապետը յայտնում է, որ չարամիտ մարդիկ, որոնք շահ ունեն խառնակութիւնների և ազ-գային ընդհարմներ մէջ, սուտ լուրեր են տարածում, մտքերը պղտորելու համար։ Կոչ է անում հոգեւորականութեանը և բոլոր բա-րեմիտ անձերին հանգստացնելու ժողովրդին և վերջն էլ աւելացնում է, որ եթէ որ և է կողմից յանդուրժեալ լինի խառնակութիւն սկսելու Բագուում, ինքը հաստատ և անյող-դող վճռել է վարկենաբար ճնշել ամեն տե-սակ փորձ։

«Вар. В.» լրագրը հաղորդում է, որ Կայս-րուհի Մարիայի հաստատութիւնների հոգա-բարձական խորհրդի որոշումը գտել է Բարձ-

ւոր: Բաղադրում հանգիստ է: Երեկ նահանգապետը մեկնեց:
Նիկոլայի, 23 մայիսի 3 օր ընդհանուր գործադուլ անելուց յետոյ՝ առևտրական նահանգապետը աշխատանքները վերսկսեցին: Բորայի կողմից միջնորդութեամբ համաձայնութիւն կայացաւ բանւորները և արտահանողները միջև:

24 մայիսի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մայիսի 23-ին Հեռուոր Արևելքից պաշտօնական տեղեկութիւններ չեն ստացվել:—Մայիսի 23-ի ցերեկվայ ժամը 2-ին Իսակիելովի տաճարում հոգեհանգիստ կատարվեց սպանված զորականներին համար:—Վիենայի զինուորական շրջանի ինժեներները զինուոր Եանուզիովսկին նշանակված է Կովկասի զինուորական շրջանի ինժեներների գլխավորը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

20 մայիսի

Բորայի զինվորներ . . .	51 3/4—63 1/2
Պետական 40/0 ընդհանուր . . .	83 3/4 —
I Խաղար. տոմսերը . . .	376 —
II . . .	285 1/2 —
III . . .	254 1/4 —
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ. . .	— —
Բազուրի . . .	— —
Թիֆլիսի հող. բանկի 50/0 . . .	— —
41 2/3 0 . . .	— —
Բազուրի նաւթ. Ընկ. . .	374 1/2 —
Կապիտալի Ընկ. . .	— —
Մանթաշանի և Ընկ. . .	191 —
Նորելի և Ընկ. . .	9925 —

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՆԻՔՄԱՆ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱԶԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ
ԲԺՇԱԿԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վոթոնցովի արձանի հանդէպ)
ԱՄԵՆ օր, բացի կիրակի օրերից:
Ա. Ա. Ռ. Օ. Տ. Ն. Բ. Ը.
27 1/2 ժ. 10 ժ. աղբի. Կրեդիտ. և Ներքին
Մ. Գ. ԱՆԵՏԻՍԵԱՆՆԵՐ—10—11 ժ. մորթու, վեներակ
և վերաբերություններ:
2. Բ. ՄԱՐԿԱՆԱՍԵԱՆՆԵՐ—11—19 ժ. մանկաբանություն,
թեան, կանանց և երեխայից հ.
Գ. Բ. ԳՅՆԵԼԻՆԵՎ—12—1 ժ. ակամի, քթի և կողմերի
Գ. Բ. ՔԱՐԱՆԱՆԵԱՆՆԵՐ—1—1 1/2 ժ. Կրեդիտ. և երեխայից հ.
Գ. ԿԱՐԱՆԱՆԵԱՆՆԵՐ—1—1 1/2 ժ. Կրեդիտ. և երեխայից հ.
Մ. Գ. ՄԱՆՈՎՈՎ, աստիճանային. 9—11 ժ.
Կրեդիտ. և Երեխայից հ. 1—2 ժ. մանկաբանություն,
թեան և կանանց հ.
Բ. Ն. Բ. Ն. Բ. Ը.
Գ. Ա. ՔԱՐԱՆԱՆԵԱՆՆԵՐ—7 1/2—8 ժ.
Գ. Ա. ԱՐԴԱՆԱՆԵԱՆՆԵՐ. Կատարում է միջոց-բերական
և բաղադրությունները հետադարձություններ:
Օ. Ա. ԱՌԱՎԱՆԱՆՆԵՐ—աստիճան. ծաղկահատ և բժշկական
մարմնամարզ. դիմել 11—1 ժ.
Վճարը 50 կ. քաղաքային ծրու. Համալսարանի (կծու-
սելիս) և օպերայի համար առանձին:
Հիւանդանոցում ընդունվում են և զննվողները հե-
տադարձությամբ:
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

Բ. Ն. Բ. Ն. Բ. Ը.
Ա. Յ. Բարանեանց
մեկնեց Կովկասի հանքային ջրերը և անցեալ տարիներին նման այս ամառը ևս կընդունէ ներքին և ջրային հիւանդությունները ունեցողներին Պետադոսկում և Էստէնտուկում մայիսի 17-ից:
(Կ. Ե. Ն.) 6—20

Բ. Ն. Բ. Ն. Բ. Ը.
Մ. ՄՈՒՐԱՆԵԱՆ
Կը վերադառնայ արտասահմանից Պետադոսկ մայիսի 10-ին և այդ ժամանակից կը սկսէ իր ընդունելությունները: Հասցեն՝ Երկաթուղային փողոց, առաջին մայր եկեղեցու յետև, տուն Արխիպովի:
(Բ. Ե.)

Բ. Ն. Բ. Ն. Բ. Ը.
Տ. ԳԻՈՐԳ-ԲԵԳԵԱՆ
Ա. ՉԳԻ ՀԻՒՆԴԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելություններ ամեն օր.
Առաւօտեան ժամը 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վերամիջօրյայի փողոց № 8: (Ե. Ե.) 87—100

Բ. Ն. Բ. Ն. Բ. Ը.
Գ. Ա. ՀԱՆՎԵՐԴԵԱՆ
Մասնագետ միջային և սիֆիլիսային հիւանդություններին: ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան 6 ժ.—9 ժ.: Կուկիա, Սեմեոնովսկայի փ. № 20.
(Ե. Ե. Ն. Բ.) 19—30

ԲԺՇԱԿ. Տ. ՄՈՒՐԱՆ
Բ. Ն. Բ. Ն. Բ. Ը.
Ընդունում է մասնավորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. Երեկոյեան 6—8 ժ.: Մեծ Վանքի փողոց, տուն Կուկանովի, դեղատան կից:
(Ե. Ե.) 16—80

Բ. ՆԱՄԱՍԱՐԴԵԱՆ
Պ. Ե. Ա. Մ. Ն. Ա. Բ. Ն. Ը.
Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, երեկոյեան հրապարակ, տուն Արդութեան, Լուսնակար Լալայանցի բնակարան:
(Ե. Ե.) 12—50

Ա. Տ. Ա. Մ. Ն. Ա. Բ. Ն. Ը.
Ս. Գ. ՇԵՐԱՍՏԱՆԵԱՆԸ
Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, երեկոյեան հրապարակ, տուն Արդութեան, Լուսնակար Լալայանցի բնակարան:
(Ե. Ե.) 12—50

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՆՆԵՐ ՈՒՊՐԱՎԱՆ
Երբեք չի լինում, որ համաձայն Դոմայի որոշման 1904 թ. ղեկավարներ 7-ին, որ արդէն օրինական ոյժ է ստացել, անշարժ կայքերի գնահատման տուրքի յետաձգման համար տուգանքը կանոնի 1905 թ. յունիսի 1-ից սկսած, փոխանակ 9-ի, 12% տարեկան, այսինքն բոլորուց մէկ կողմի ամեն մի յետաձգված ամսվայ համար: 3—3

Ճեմարանի գաղտնական բաժնին աւարտած
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
Կարգավոր է զանազան առարկաներ հայերէն լեզուով: Անդրեւսկայ 29. Սալախյան. 2—3

Բ. Ն. Բ. Ն. Բ. Ը.
ԳԻՈՐԳ ԹԱՂԵՈՍԵԱՆ
Անցեալ տարիներին նման այս ամառ ևս կընդունէ հիւանդներ կովկասեան հանքային ջրերում: Հասցեն՝ Եսսենտուկ, Верхняя Курсовая ул., дача Николаевой. (Կ. Ե. Ե.) 9—10

ՄԻ օրերից, որը ունէ թէ ուսերէն և թէ հայերէն ջրից գիր, որոնում է գրագրուհու պաշտօն: Հասցեն՝ 1-ая Гончарная ул. № 2 д. Казимъ-Бекова кв. Ахназарьянъ. 4—5

ՄԻ հայ օրերից, որը լաւ գիր է հայերէն նոյնպէս և ուսերէն, ցանկանում է ունենալ զստեր ընտանիքներում, համաձայն է և քաղաքից դուրս. հասցեն՝ Իմանալ «Մշակ»-ի խմբագրատանը: 5—5

Լ. ՈՅՍ Տ Ե Ս Ա Ի
Լ Ե Օ
ՄԵԼԻՔԻ
ԱՂԱՋԻԿԸ
Պատմական վեպ
Գրել 1 ՐՈՒՐԻ 50 ԿՕՊԵԿ.
Ծախվում է 1) հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը, 2) Թիֆլիսի գրավաճառանոցներում:
Գրավաճառները և գումարով գնողները զիջում կը ստանան, եթէ դիմեն ուղղակի հեղինակին: 5—5

ՄԻ պարոն որոնում է գրագիր կամ գրասենեակային պաշտօն: Ունի լաւ ընկածներ: Համաձայն է գնալ և քաղաքից դուրս:
Հասցեն՝ «Մշակ»-ի խմբագրատանը կամ Թիֆլիս, Арсенальная ул. № 24. д. Казимъ-Бекову кв. А. М. А. 4—5

ՀԻՆ. ՆԱԽԱՆԵԱՆՆԵՐ ԸՆԿԻՆ ՄԱՆՏԵՍԻ ՍԱՀԱԿ ԵՐԴԱՐԵԱՆԸ աղէտի ժամանակ կորցրել է հետևեալ տոմսերը և ակցիաները:
I Կարգի 19637/20:
II » 14564/24, 0386/28:
III » 15755/21, 15025/14. և 10 հատ Թիֆլիսի նաւթարդիւնարեական ընկերութեան ակցիաներ № 11—20: (Ե. Ե.) 3—5

Լ. ՈՅՍ Տ Ե Ս Ա Ի
ԱՌՈՅԻ
«ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՈՏԸ»
Գրել 5 ԿՕՊ.
Գումարով գնողները կարող են դիմել այս հասցեով: Թրյան, книжный магазинъ «Ара-ратъ». 8—10

Հոյս տեսաւ ԱՆԴԵՐՍՈՆԻ
ՈՒՐԻՇԻ ԳԵՐԵՉՄԱՆԻ ՎՐԱ
առանց արժանութի եմ լաց լինում
Գրել է 10 Կ.

Մինչև ամսիս վերջը լրջա կը տեսնի
1. «ԱՐԵՆԱ ԶԱՅՆ», գիրք 40 կ. ճանապարհաճախով ամեն տեղ, բաղկացած է 120 էր.
2. ԻՆՁ Է ԱՅԳՈՒԹԻՒՆԸ, գիրք 30 կ. ճանապարհաճախ. ամեն տեղ, բաղկացած է 100 էր.
Էրեստ Ռեյնանի դասախոսած 1882 թ. Սօրբոնում և Շարլ. Բէգլի պատասխանը նոյն հարցի վերաբերմամբ:
Գումարով գնողներին 20% զեղջ ճանապարհաճախով: Պահանջի հետ պէտք է ուղարկել արժէքի 1/3 մասը:
Հասցէ. Тифлисъ, улица Броссе, № 23, А. А. Ованесянцъ. (Ե. Ե. Ն.) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՆԵԱՆ ԲԱՐԵՂՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ՎԱՐՆՈՒԹԻՒՆԸ խոնարհաբար խնդրում է արգոյ հասարակութեանը շուտափոյթ օգնութեան հասնել Նախկին Կոտորածի ժամանակ քննադատներին հին հագուստով, շորացու կտորով կամ փողով: Երբեք ընդունվում են նոյն ընկերութեան արհեստանոցում: Գանձովայի փողոց № 25. 1—5
Մ. Մէլք. Կարագեօղեան

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՆՆԵՐ ՈՒՊՐԱՎԱՆ
սրանով յայտարարում է, որ Բօրժոմու վարձու է տրվում նորից նորոգված կահաւորված երկարկանի մի ամառանոց, նախկին Ե. Ս. Արխաթովի, որ այժմ պատկանում է Թիֆլիս քաղաքին, 5 սենեակ ներքին յարկում, 4 սենեակ վերին յարկում, իրանց պարագաներով: Պայմանները մասին տեղեկանալ Ուլաբովայի 4 դ բաժանմունքում, ամեն օր, բացի տօն օրերից, առաւօտեան ժամը 10-ից—2 ը: 1—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՇԻՍԱՊԱՆ
Որոնում է տեղ. Հասցեն. Песковская ул. № 39 кв. Мхитарянца. (Ե. Ե.) 1—2

ԹԻՖԼԻՍԻ Ժողովարան
Թիֆլիսի Ժողովարանի աւագները խորհրդակցութիւնը յայտնում է անդամներին և կանգնողներին, որ մայիսի 30-ից Ժողովարանի ամառային շէնքում կայանալու է երկուշաբթի օրերը կօնցերային բաժին, ուրբաթ օրերը սիմֆոնիքական երեկոյթ Լ. Պ. Շախմատի ղեկավարութեամբ, երեքշաբթի օրերը ընտանեկան երեկոյթներ մասնակցութեամբ զինուորական երաժշտութեան և սազանդարների Սիմֆոնիքական և ընտանեկան երեկոյթներին աշակերտներին մուտքը արգելված է, իսկ մանկական երեկոյթներին և ֆիլագորֆ օրերը նրանք կարող են մտնել ծնողներին հետ միասին և ֆիլագորֆ մինչև երեկոյեան 10 ժամը:
(24, 29) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՆՆԵՐ ՈՒՊՐԱՎԱՆ
սրանով յայտարարում է, որ յունիսի 5-ին ցերեկվայ ժամը 12-ին նշանակված է մրցում կանաչիկացի շինելու համար Թիֆլիսի հետեւեալ փողոցներում.
1) Ակիմովսկի և Ուլաբովի փողոց, V բաղ. 24 պ. ս. բլոսնէ խողովակ 0.16×0.10 սաժ. 70 » » » 0.24×0.16 »
2) հատ դիտելու հորեր:
3) Թամարիսեան փողոցում և Թումանեան փողոցիկում, IX բաղաբաժան:
68 պ. ս. բլոսնէ խողովակ 0.24×0.16 սաժ.
2 հատ դիտելու հորեր:
3) Կոչկալարների շարքում, Բաշմաչի և II Մեխովի տուպիկում և Միջին փողոցում V բաղ. 45 պ. ս. բլոսնէ խողովակ 0.375×0.25 սաժ. 30 » » » 0.16×0.10 »
2 հատ դիտելու հորեր:
Գրաւոր յայտարարութիւններ, դրանցից աւան մէկի գնը մէջը նշանակված, պէտք է տրվեն կնքված ծրարներով մինչև յունիսի 5-ը: Անուրդին մասնակցել ցանկացողները կարող են ծանօթանալ պայմաններին հետ Ուլաբովայի շինարարական բաժնում բոլոր գործի օրերում, ցերեկվայ ժամը 1—3 ը: 1—3

ՄԻ ԹՍՍ
ՎԱՆ-ՀՈՒՏԵՆԻ
ԿԱԿԱՍԸ
Անպայման ամենալաւ դիւրամար
Ն. Ա. Ն. Ա. Ն. Ա. Ն. Ա.
Ֆաբրիկանտ Ե. Վ. Վան Կապտեն և Յուն (Գոլանդիա).
Կաֆո Կապտեն

Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնագործութեան ընկերութեան
ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵՐԵՆԻ, ԿԱՆԱՆՏ, ՏԱՄԱՐԴԱՆՆԵՐ և ԵՐԵՆԱՆԵՐԻ
ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրիսողներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդրկովկասի միւս քաղաքներում ՄՄԵՆԱԼԱԻ վաճառատներում.
ՆԱԽԱՆԵԱՆՆԵՐ ԸՆԿԻՆ ՄԱՆՏԵՍԻ ՍԱՀԱԿ ԵՐԴԱՐԵԱՆԸ աղէտի ժամանակ կորցրել է հետևեալ տոմսերը և ակցիաները:
I Կարգի 19637/20:
II » 14564/24, 0386/28:
III » 15755/21, 15025/14. և 10 հատ Թիֆլիսի նաւթարդիւնարեական ընկերութեան ակցիաներ № 11—20: (Ե. Ե.) 3—5
Լ. ՈՅՍ Տ Ե Ս Ա Ի
ԱՌՈՅԻ
«ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՈՏԸ»
Գրել 5 ԿՕՊ.
Գումարով գնողները կարող են դիմել այս հասցեով: Թրյան, книжный магазинъ «Ара-ратъ». 8—10